Հավելված

Նկար 1: Եղիշե Չարենց, Ազատ Վշտունի, Գևորգ Աբով, Դեկլարացիա Երեքի, Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, հունիսի 14, № 130:



3

ԴԵԿԼԱՐԱՑԻԱ ԵՐԵՔԻ

Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, վոր անխուսափելիորեն դատապարտված է մահվան։

Նրա գոյությանը միակ արդարացումը—մահամերձ լինելն է։

Նրա տրադիցիաները նման են թոքախտավոր երեխաների, վորոնք բացի վարակումից վոչինչ չեն առաջացնելու։

«Հայրենիք», «Մեր անբիծ», «Անապատ ու մենություն», «Մթնշաղներ Նրբակերտ», «Մոռացում ու երազներ», —ահա մեր գրական թոքախտի մանրենները, վորոնց առաջացրած պատուղները են՝ նացիոնալիզմ, ռոմանտիզմ, պեսիմիզմ և սիմվոլիզմ։

Մենք հանդես ենք գալիս վորպես ախտահանողներ։

Մենք բերում ենք մեզ հետ մաքուր օդ և երկաթե առողջություն։

Քաղքենի նացիոնալիզմին մենք հակադրում ենք պրոլետարական ինտերնացիոնալիզմը։

«Անբիծ սիրուն» մենք դեմ ենք դրնում սեռական առողջ բնազդը։

Մեզ համար «Անապատները» դարձել են բազմաժխոր քաղաքներ։

Իսկ մեր երակների մեջ մենք ըզգում ենք բազմահազար ամբոխների հույզը։

«Նրբակերտ մթնշաղներին» այսոր հաջորդել է բոսոր արշալույսը և պայքարող դասակարգի մարտական շեփորը մեզ արթնացրել է «մոռացման երազներից»։

Մեր մեջ ստեղծագործում է բազմությունների տեմպը և մենք դեպի բազմությունն ենք իջեցնում մեր ստեղծագործությունը։

Մենք պահանջում ենք.—

1. Դուրս հանել բանաստեղծությունը սենեակներից դեպի փողոցներն ու մասները և գրքերից դեպի կենդանի խոսքը։

2. Արտահայտելայն, ինչվոր այժմեական է—շարժում, դասակարգային պայքար, երկաթ ու կարմիր։

Այդ նպատակներին հասնելու համար բանաստեղծության մեջ պետք է կիրառել՝

1) Ռիթմը, վորպես շարժում.

2) Պատկերը (Образ) վորպես կենցաղի բնորոշում.

3) Վոճը և լեզուն, վորպես տվեալ նյութի և խառնվածքի արտահայտություն։

Մեր օրվա լոզունգն է.

Կորչեն գրական արիստոկրատ շկոլաները, առանձնասեռական պրոզաները, գրադարակներում ննջող գրքերը և սալոնային կանայք։

Կեցցե գեղարվեստական կենդանի խոսքը, ստեղծագործող բազմությունները։

Կեցցե ստեղծագործող բազմությունը իր հզոր ռիթմով։

Կեցցե պրոլետարական հեղափոխությունը։

Եղիշե Չարենց, Ազատ Վշտունի,
Գեորգ Աբով

6 հունիսի 1922 թ.
Երևան

ՊՐՈԼԵՏԱՐԱՅԻ, ԲՈՆՎԱՏԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՅ.

Հավելված

Նկար 2: Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, № 133, հունսիսի 16:



Բոլորին, բոլորին, բոլորին.—Երեքի գրական գրուպան առաջիկա յում կազմակերպելու և գրական բանավեճեր, դասախոսութիւններ, երեկոյթներ, միտինգներ և ցույցեր։ Հրատարակելու ե պլակատներ, պատի բանաստեղծութիւններ, թռուցիկներ և կոչեր։

Սրբեցեք ձեր աչքերն ու ականջները և պատրաստվեցեք տեսնելու և լսելու։

Մանրամասնութիւններն առանձին աֆիշաներում։ Երեքը

Նկար 3: Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, հուլիսի 5 , № 150:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՔԻ

Կուսակցական Ակումբի սրահում (Ցեկայի դիմաց)

Շաբաթ, հուլիսի 8-ին, երեկոյեան ժամը 8-ին

ԿԸ ԿԱՑԱՆԱ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ № 1

Նիւթն և՝ „ՄԵՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ"

Դասախոս՝ ԱԲՈՎ

Դասախոսութիւնից հետո ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ և արտասանութիւններ ԵՐԵՔԻ։

Մուտքը ԱԶԱՏ ե եվ ԶՐԻ բոլոր խաղաքացիների համար ԱՆԽՏԻՐ, Տոմսակներ ՎՈՉՈՒԻ չեն ուղարկվում։

ԵՐԵՔԸ

Նկար 4: Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, հուլիսի 19, 20, № 159, 160:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԵՔԻ

Կուսակցական Ակումբի դահլիճում (Ցեկայի դիմաց)

Հինգշաբթի, հուլիս 20ին երեկ. ժ. 8ին,

ԿԸ ԿԱՑԱՆԱ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ № 2

Նիւթն է՝ „Վ. ՏԵՐԵԱՆԸ՝՝ դասախոս՝ Ե. ՉԱՐԵՆՑ

Դասախոսութիւնից հետո ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ և

ԸՐՏՍՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԵՔԻ:

Մուտքը ԱԶԱՏ և ԶՐԻ բոլոր քաղաքացիների համար ԱՆԽՏԻՐ,

Տոմսակներ ՎՈՉ ՎՈՒԻ չեն ուղարկվում։

ԵՐԵՔԸ

Նկար 5: Խորհրդային Հայաստան, Երևան, 1922, օգոստոսի 22, № 181:



«ԵՐԵՔԸ»

Երեվան, 12 օգոստոսի.—«Երեքը» գրական խմբակիից Ե. Չարենց և Գ. Աբով մեկնում են Մոսկվա. ճանապարհին կանգ են առնելու Ալեքսանդրապոլում, ուր տալու են շեփորահանդես։

Հավելված

Հավելված

Նկա 6: Խորհրդային Հայաստան, Երևան, 1923, փետրվարի 20, № 35:

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱՅԻՑ ՍՏԱՑՎԵՑ ՅԵՎ ԾԱԽՎՈՒՄ Է

I

ՅԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ

ՅԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հատոր Ա. և Բ.

II

ՊԱՐԼ ՊԱՂՈՒՅՊԻ

ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Դիմել՝ ԳԼԽՔԱՂԱՂՈՒՍՎԱՐԻ ԳՐԱԽԱՆՈՒԹ *(Սբուլյան 20)*

4—2

Նկար 7: Կոկորդիլոս («Քուրա»-ի երգիծական հավելվածը) Մոսկվա, 1923, № 1:

Նկար 8: Կոկորդիլոս («Քուրա»-ի երգիծական հավելվածը) Մոսկվա, 1923, № 1:



Նկար 9: Խորհրդային Հայաստան, Երևան, 1923, հուլիսի 8, № 176,

ՍՏԱՑՎԵԼ Է ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՑԵՂԻՑԵ ՉԱՐԵՆՑԻ
„ԿԱՊԿԱՋ"
ԹԱՄԱՇԸ
Դինը 75 կոպեկ չեքվանեցով
Դիմել գրախանութները
3—1

Նկար 10: Մարտակոչ, Թիֆլիս, 1923, հուլիսի 17, 18, 19, 20, 21, № 119, 120, 121, 122, 123


2—2 Miss Karren yeppe c/o mr. schuep et co alep-syrie.
ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
ԿԱՊԿԱՋ
ԹԱՄԱՇԱ ՉԱՐԵՆՑԻ
3—1

Հավելված

Նկար 11: Մարտակոչ, Թիֆլիս, 1923, հուլիսի 29, 31, օգոստոսի 1, № 130, 131, 132:

Նկար 12: Խորհրդային Հայաստան, Երևան, 1923, հոկտեմբերի 20, № 234



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏ. ՊՐՈԼԵՏ. ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

ԱՅՍՕՐ. ՇԱԲԱԹ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԺԱՄԸ 8-ԻՆ

ԿԿԱՏԱՐՎԻ

= ԳՐԱԿԱՆ ԴԱՏ =

ՅԵ. ՉԱՐԵՆՑԻ

„ԿԱՊԿԱՋ" ԹԱՄԱՇԱ-ՅԻ

ՄԱՄԻՆ

ՄԵՂԱԴՐՈՂ—Ա. ԽՈՆԴԿԱՐՅԱՆ.

ՊԱՇՏՊԱՆ—Տ ՀԱԽՈՒՄՅԱՆ.

ԿԱՐՏԱՀԱՅՏՎԵՆ—Ա. ԿԱՐԻՆՅԱՆ. Գ. ԱԲՈՎ. ԼԵՎՈՆ ՔԱԼԱՆԹԱՐ. Մ. ԳԱՐԲԻՆՅԱՆ. Ա. ԱԹԱՅԱՆ. ԹՈԹՎԵՆՑ և Ն. ԳԱԲԱՂՅԱՆ.

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ—ԳՅՈՒԼԻՔԵՎԽՅԱՆ. ՅԵՐԶՆԿՅԱՆ և ԱՐՏԵՄ ՅԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.

„ԿԱՊԿԱՋ"-Ը կկարդա Մ. ՋԱՆԱՆԸ.

Տեղերի գները—ՅԵՐԿՈՒ և ՄԵԿ ՄԻԼԻՈՆ. աշակերտներին՝

ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԸ.

Գաս. կարգադրիչ՝ Ս. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ.